

29 հոկտեմբերի 2018թ.

Թիվ 01-1270

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած պարտատոմսերի մարման և արժեկտրոնների վճարման ժամանակացույցի և պարտատոմսերի գնի հաշվարկման բանաձևի մասին

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ AMACBABA24ER4 թողարկման դրամային պարտատոմսերի արժեկտրոնների վճարումը կկատարվի հետևյալ ժամանակացույցով.

1. արժեկտրոնի առաջին վճարում՝ 12 հունվար 2019թ.
2. արժեկտրոնի երկրորդ վճարում՝ 12 հուլիս 2019թ.
3. արժեկտրոնի երրորդ վճարում՝ 12 հունվար 2020թ.
4. արժեկտրոնի չորրորդ վճարում՝ 12 հուլիս 2020թ.

Պարտատոմսերի մարման ամսաթիվ՝ 12 հուլիս 2020թ.

Պարտատոմսերի մարման և արժեկտրոնների գումարները պարտատոմսերի սեփականատերերին վճարվելու են համապատասխանաբար պարտատոմսի մարման և արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե այդ օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսի մարման/արժեկտրոնի վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի մարման և արժեկտրոնների գումարները ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի մարման և արժեկտրոնների գումարների հաշվարկման օրվան նախորդող օրը պարտատոմսերի սեփականատերերի ռեստրի փակման դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեստրում գրանցված անձինք՝ (սեփականատերերը):

Պարտատոմսերի սեփականատերերի ռեստրը փակվելու է պարտատոմսերի մարման և հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին:

Բանկը պարտատոմսերի մարման և արժեկտրոնների գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերի սեփականատերերի ռեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չհինելու կամ բացակայության դեպքում վճարումները իրականացվելու են Բանկի

Կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտում նշված հաշվեհամարին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ կանխիկ՝ Բանկի գլխամասային գրասենյակում:

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV \times \frac{C}{K} \times \frac{DCS}{DCC}$$

AI – մեկ պարտատոմսի կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույթն է՝ արտահայտված տոկոսներով,

k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը (արժեկտրոնների կիսամյակային վճարման դեպքում k=2),

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual-ը, ընդ որում

DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1],

DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1],

D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,

D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$P = \frac{C}{f} \sum_{i=1}^n \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{n-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

P - Պարտատոմսի լրիվ գինն է,

DSN - գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է 2 (երկու) կիսամյակային վճարումների համար),

n - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

/ Գլխավոր գործադիր տնօրեն



Հակոբ Անդրեասյան

